## 7003-A ՃԱՀԻԼ ԵՄ

### JAHIL YEM

Աղջի էս ինչ արեցիր,
Թամամ հոգիս հանեցիր,
Ինձ նման թառլան տղին
Առանց դանակ մորթեցիր:

Ա՛խ իմ սիրուն աղուորս
Ես քեզ համար տանջւում եմ
Աման, աման այրւում եմ
Ես քու սիրով տանջւում եմ:

Ճահիլ եմ կընիկ չունեմ
Գիշերները քուն չունեմ,
Աստուած վկայ սուտ չըկա
Քեզնից ուրիշ եար չըկա:

Աման, աման այրւում եմ
Ես քո սիրով տանջւում եմ.
Դուն ինծի ալ խաբեցիր,
Առանց քեզի կեանք չունիմ:

## 7003-B ԿԱՐԳՈՒԻԼ ԿՈՒԶԵՄ

### GARKUVIL GOUZEM

Եկայ, եկայ եարիս մօտ,
Նրա պաչել եմ կարօտ,
Սիրունիկ, սիրունիկ աղջիկ ես
Մեղրի պէս մեղրի պէս քաղցրիկ ես:

Էս օր տէրտէր պիտ՝ կանչեմ,
Էլ չեմ կարող ըսպասել,
Կուզեմ շուտ, կուզեմ շուտ պսակւել
Անուշիկ, անուշիկ կնիկ առնել:

Երբ քեզ կանչեմ Անժէլ ճան,
Դու ձայն կուտաս Պօղոս ճան,
Ուրիշին, ուրիշին չը սիրես
Յետոյ ինձնից ծեծ կուտես:

## 7004-A ՍԻԹԻԶԻՆԸ

### THE CITIZEN

Բարով եկար ով սիթիզին,
Ո՛վ հազար բարի.
Ես անհամբեր սպասեցի
Քեզի հոս չորս տարի:

Մազերդ թափած, ակռադ փթթած
Քիչ մըն ալ դժուարատես,
Կուզաս տանիլ հայ օրիորդ մը
Վարդեվառին պէս:

Գործարանին ծուխէն դեղնած,
Լէմօնի նման,
Կէս հայերէն, կէս անգլիերէն
Խօսուածքիդ ղուրպան:

Ամերիկա տանելու համար
Զիս շատ կը սիրես,
Սակայն չըլլայ որ թողուս խեղճին
Հոն հասնելնուս պէս:

## 7004-B ԼՕՖԸՐ ՓԵՍԱՆ

### LOAFER PESAN

Լօֆըրութեան վերջը չըկայ,
Ինծի կըսեն զէվզէկ տըղայ,
Մայրիկ զէնկին աղջիկ մը կայ
Գնա ուզէ քեզի կուտայ:

Չորս օր է որ կարգուեցայ
Կնիկս քառասունի մօտ կայ,
Մեծկակ է գիտեմ ամմա
Իր քովը տոլարներ շատ կայ:

Տոլարները կծիկ է ըրած
Քլօզիթին մէջ է դրած,
Տեղը գիտեմ, բայց կը վախնամ
Ծեծը կուտեմ բանտ կերթամ:

Երէկ գիշեր պիրտէն պիրէ
Ջօլու լօպէթներ եկաւ,
Կը մեռնիմ կոր, պոռաց կանչեց,
Ես ինչ գուշում բան եղաւ:

Ծախս մի ըներ կընիկս,
Սեւուրդ իրաւ կը գիտնայ,
Վերջը կըլլամ փերուշան
Խենդանոցը ես իյնամ: